ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԲԱՆԱՎԵԾ - ՔՆՆԱՐԿՄԱՆ ԺԱՄԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

07.02.2017 16:58

Հարգելի փաստաբաններ,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից 08.02.2017 թվականին կազմակերպվող ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների 11.02.2017 թվականի ընտրությանն առաջադրված թեկնածուների ԲԱՆԱՎԵԾ - ՔՆՆԱՐԿՄԱՆ ԺԱՄԸ ՓՈՓՈԽՎԵԼ Է, և այն տեղի է ունենալու 2017 թվականի փետրվարի 8-ին, ժամը 18:30-ին՝ «Կոնգրես» համալիրի մեծ դահլիճում (ք. Երևան, Իտալիայի փողոց 1, 1-ին հարկ, Մեծ դահլիճ):

Բանավեծ-քննարկմանը հրավիրվում են ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների 11.02.2017 թվականի ընտրությանն առաջադրված խորհրդի անդամի բոլոր թեկնածուները, ինչպես նաև բոլոր փաստաբանները:

<u>Բանավեծ-քննարկման անցկացման կանոնները՝</u>

1. Վարողը (կնշանակվի ՀՀ փաստաբանների պալատի կողմից), կներկայացնի թեկնածուներին և ազգանվան այբբենական հերթականությամբ արտահայտվելու հնարավորություն կտա բանավեծ-քննարկմանը ներկա գտնվող թեկնածուներից յուրաքանչյուրին: Յուրաքանչյուր թեկնածուին կտրվի 5 րոպե ժամանակ ելույթի համար: Ելնելով մասնակիցների քանակից վարողը կարող է բոլոր թեկնածուների ելույթների համար սահմանել ավելի կարճ ժամանակ: Ելույթները չեն կարող ընդհատվել:

2. ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ներկայացուցիչները կգրանցեն հարց տալու ցանկություն հայտնած փաստաբաններին, և կներկայացնեն վարողին:

3. Վարողն՝ ըստ գրանցման հերթականության, կհրավիրի ամբիոնի մոտ հարց տալու ցանկություն հայտնած փաստաբանին: Յուրաքանչյուր փաստաբան հնարավորություն է ունենալու տալ մեկ հարց:

4. Հարցերին թեկնածուները կարող են պատասխանել հետևյալ կերպ՝

ա) եթե տրված հարցն ընդհանուր է, ապա այդ հարցին պատասխանում են բոլոր թեկնածուները հետևյալ հերթականությամբ՝ ազգանվան այբբենական կարգով՝ այն պայմանով, որ հաջորդ ընդհանուր հարցին առաջինը պատասխանելու է հաջորդ թեկնածուն,

բ) եթե հարցը վերաբերում է կոնկրետ թեկնածուին, ապա այդ հարցին պատասխանում է կոնկրետ թեկնածուն:

5. Արգելվում է բանավեծ-քննարկման ժամանակ ռեպլիկներ անել, վիրավորել թեկնածուներին կամ մյուս փաստաբաններին:

6. Վարողը պետք է հետևի, որ ներկաները պահպանեն սույն կարգը, իսկ վիրավորական հարցերը վարողի կողմից պետք է հանվեն:

7. Հանդիպումը կարող է ձայնագրվել և/կամ տեսաձայնագրվել:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմ

Առաջարկվող նորություններ

22.12.2016ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12.01.2017ԾԱՆՈՒՑՈՒՄ՝ 11.02.2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13.01.201711.02.2017Թ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԱՆՁԱՆՑ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՁԵՎԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

15.01.201711.02.2017Թ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐՄԱՄԲ ԿԱՄ ԻՆՔՆԱՌԱՋԱԴՐՄԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ 15.01.2017Թ ԴՐՈՒԹՅԱՄԲ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })